



11-ը մայիսի 2010թ.

Մամուլի հաղորդագրություն

14-ը ապրիլի 2010թ.

Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի /ԻԿՕՄՕՍ/ առաջարկությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ն 1983-ից ապրիլի 18-ը նշում է որպես **Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օր**:
Ընդառաջ գնալով 2010-ը **Կենսաբազմազանության միջազգային տարի** հռչակելու ՄԱԿ-ի որոշմանը, ԻԿՕՄՕՍ-ը Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրը **2010-ին նշում է «Գյուղատնտեսական ժառանգություն»** խորագրի ներքո:

Հազարամյակների ընթացում մարդու կողմից ծավալված գյուղատնտեսական գործունեությունն ու անասնապահությունը այսօր էլ կարևոր են ու վճռորոշ: Վերջին տասնամյակները բնութագրվում են «մշակութային ժառանգություն» հասկացության ընդարձակմամբ՝ ներառյալ նաև գյուղատնտեսական գործունեության արգասիք հանդիսացող նյութական և ոչ նյութական ժառանգությունը՝ գյուղատնտեսական նշանակության շենքեր, պտղատու այգիներ, ջրաղացներ, գյուղատնտեսական նշանակության դարավանդներ, ոռոգման ջրանցքներ, ջրհորներ, բնապատկեր, տեղական փառատոններ, սննդամթերքի պատրաստման ավանդական հմտություններ և այլն: Կարևորելով գյուղատնտեսական ժառանգության նշանակությունը գոյատևման, տևական զարգացման, մեզ շրջապատող բնապատկերի պահպանության և վերջապես կենսամակարդակի առումով՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն Համաշխարհային ժառանգության և Ոչ նյութական ժառանգության ցանկերը դիտարկում է որպես կարևոր գործիքներ՝ աշխարհի գյուղատնտեսական ժառանգությունը ճանաչելի դարձնելու և պահպանելու ճանապարհին: 1995թ. Ֆիլիպինների լեռնային շրջանների բրնձի մշակության պլանտացիաների գրանցումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցուցակում շեշտեց բնապատկերի պահպանության կարևորությունը, որին սպա հետևեցին ծխախոտի, սուրճի, ալրեի մշակութային լանդշաֆտների գրանցումները Կուբայից, Մեքսիկայից, այնուհետև՝ միջազգային ճանաչում ունեցող խաղողագործական լանդշաֆտներ Պորտուգալիայից, Հունգարիայից, էքստենսիվ անասնապահության և ամառային արոտատեղեր հանդիսացող վայրեր Մոնղոլիայից և այլն: Ներկայումս 21 մշակութային լանդշաֆտներ են գրանցված Համաշխարհային ժառանգության ցանկում՝ հիմնականում գյուղատնտեսական նշանակության:

Գրեթե ամենուր առկա է նաև գյուղատնտեսական ժառանգության **ոչ նյութական** ըմբռնումը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ոչ-նյութական ժառանգության ցանկում գրանցված շատ օրինակներում ծխական, խնջույքային, ավանդական հմտություններն ուղղակիորեն կապված են գյուղատնտեսական գործունեության հետ. Ճապոնիայից գրանցված հյուսիսային Ակիու քաղաքի

բնակիչների պարը վերատադրում է բրնձի սածիլման տեսարանը և պարի միջոցով առատ բերք է խնդրում: Կորեայի կողմից գրանցված «Գ-անգանգսուլլա» սեզոնային ծեսը վերատադրում է ծովատառեխի պատրաստումը կորեական գյուղերում, Կոստա Ռիկայից գրանցված եզների ավանդական սայլերը կամ այսպես կոչված «կառետաները» հարյուրամյակ շարունակ դեպի խաղաղօվկիանոսյան ափ սուրճի տեղափոխման միջոցներ են հանդիսացել:

Համաշխարհային ժառանգության շտեմարանում իր արժանի տեղն է զբաղեցնում նաև Հայաստանը. Ծննդոց գրքում հիշատակվող երկնային դրախտ՝ ուր սկիզբ է առել խաղողի մշակույթը: Հնագիտական հետազոտությունների արդյունքում բացված հնագույն բնակատեղիները թույլ են տալիս Հայաստանը տեսնել հին աշխարհի գյուղատնտեսական մշակույթում և, մասնավորապես, որպես երկրագործական մշակույթի առաջացման օրրան ու խաղողի նախահայրենիք: Հենց երկրագործական մշակույթն է խթանել այնպիսի հզոր պետական կազմավորումների առաջացմանը՝ ինչպիսիք էին Շումերը, Աքքադն ու Ուրարտուն:

Վերջին տարիների պեղումները Վայոց ձորում ի հայտ բերեցին ոչ միայն Հայաստանում, այլ աշխարհում խաղողի վերամշակման ամենահին կառույցը՝ հնձան Արենի գյուղի մոտ, Արփա գետի ձախ ափի քարանձավի մոտ (մ. թ. ա. 5-4 հազարամյակներ): Գարու և ցորենի, որոշ ձիթաբույսերի մշակությունը, խաղողագործությունը, այգեգործությունն ու զինեգործությունը եղել են նաև Ուրարտական պետության տնտեսության զարգացած ճյուղերը: Պեղումների ժամանակ հայտնաբերված գարու հատիկների միատարրությունն ու մաքրությունը ցույց են տալիս, որ մ. թ. ա. 9-6-րդ դարերում իսկ ուրարտացիները մշակել են բազմաշար գարու բարձրարժեք տեսակներ: Հույն պատմագիր Քսենոփոնի վկայությամբ Հայաստանում դեռևս մ. թ. ա. 5-4-րդ դարերում են զարեջուր արտադրել: Ասորեստանյան սեպագիր արձանագրությունները, Կարմիր բլուրի պեղումներից հայտնաբերված մառանների, բազմաթիվ կարասների, զինեգործական պարագաների, ծծումբի առկայությունը, խաղողի ածխացած սերմերը վկայում են, որ խաղողի այժմյան որոշ տեսակներ (Ոսկեհատ, Գառան դմակ, Մսխալի, Արարատի և այն) տեղական ծագում ունեն: Աղթամարի վանքի աշխարհիկ թեմայով բարձրաքանդակներից մեկում պատկերված է այգին բահով փորող հայ շինականը: Միջնադարյան զարգացած այգեգործության մասին հարուստ նյութ է տալիս հայկական մանրանկարչությունը:

Հազարամյակներ շարունակ հայ ժողովրդի տնտեսական կենցաղում ուրույն և կարևոր տեղ է ունեցել նաև ձիթատու բույսերի մշակումը, դրանց հատիկներից զանազան եղանակներով ձեթի ստացումը: Հայաստանի տարածքում առայժմ հայտնի հնագույն ձիթհանը հայտնաբերվել է Կարմիր բլուրի պեղումներից. երեք երկայնական կից սրահներից կազմված շինության ներսում հայտնաբերված քունջութի մնացորդների մեծ կուտակումը թույլ է տալիս ենթադրել, որ այն ձիթհան է եղել:

Հայկական լեռնաշխարհում գյուղատնտեսական մթերքների վերամշակման հնագույն միջոցներից են հացահատիկների աղորիքները՝ հայտնի դեռևս մ.թ.ա. 8-րդ հազարամյակից: Վերջիններիս հետագա կատարելագործումն ու տնտեսական պահանջարկը, հավանաբար 7-8 դդ.-ում հանգեցրին տեխնիկական մեծագույն նվաճումներից մեկին՝ ջրաղացի հայտնագործմանը:

Այս համատեքստում «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը և ԻԿՕՄՍՍ/Հայաստան հասարակական կազմակերպությունը՝ «Երևանի գարեջուր» ՓԲԸ-ի աջակցությամբ 2010թ. ապրիլի 18-ին հանդես կգան օրվա խորհուրդը ներկայացնող միջոցառմամբ՝ հանրությանը հիշեցնելով, որ ժառանգության պահպանությունը բոլորիս միջև բաշխված պատասխանատվություն է: Միջոցառման բացման արարողությանը կհետևի «Ուրարտուից Երևանի գարեջուր» խորագիրը կրող ցուցահանդեսի բացումը՝ թանգարանի ժամանակավոր ցուցադրությունների սրահում: Կողք-կողքի ներկայացված ցուցանմուշների և լուսանկարների միջոցով այցելուին կներկայացվի Հայաստանում գարեջրի արտադրության անցյալն ու ներկան՝ Ուրարտուից մինչև Երևանի գարեջուր: Շեշտելով այն, որ գարեջրագործությունն ու գինեգործությունը Հայաստանում ապրող և զարգացող մշակույթներ են՝ միջոցառումը կավարտվի թանգարանի ներքին բակում կազմակերպված «Երևանի գարեջրի» և հայկական գինիների ու մթերքների այն տեսականու համտեսով, որոնց արտադրությունը խրախուսվել է «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից:

Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան նվիրված միջոցառման բացումը տեղի կունենա «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում, 2010թ. ապրիլի 18-ին ժամը՝

12:00-ին:

/ք. Երևան, Էրեբունու փող. 38, հեռ.՝ 43 26 61/:

ԻԿՕՄՍՍ/Հայաստան Հ/Կ

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան

«Երևանի գարեջուր» ՓԲԸ